


ԳՈՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԿՈՒՐՄԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՆԱՐԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ * 
Երևանի պետական համալսարան

Խրախուսանքի արտահայտման միջոցներից մեկը գովասանքն է: Գովասանքը հասցեատիրոջը կամ երրորդ անձին ուղղված անկեղծ դրական գնահատականն է՝ անկախ նրանից՝ նա ներկա է, թե ոչ հաղորդակցության ընթացքում: Հասցեատիրոջը կամ երրորդ անձին իրենց գործողությունների համար գովաբանելիս, գովեստի հասցեատերերը բացահայտորեն արտահայտում են իրենց հուզական վերաբերմունքը փաստերի նկատմամբ:

Գովելը համարվում է դրական գնահատողական խոսքային ակտ և հաղորդակցության բանակցային ռազմավարության մի մաս: Գովեստը իլլուկուտիվ ակտ է, որը ենթադրում է խոսքային ակտի նպատակաուղղվածության դրսևորում և արտահայտում է խոսողի անկեղծ վերաբերմունքը խոսակցի նկատմամբ:

Այս ակտի իրականացումը պայմանավորված է հաղորդակցվողների տարբեր կարգավիճակային և դերային բնութագրերով:

Հողվածի նպատակն է ներկայացնել գովեստ արտահայտող խոսքային ակտերի իմաստային և գործաբանական առանձնահատկությունները:

Բանալի բառեր – *խոսքային ակտ, գովեստ, պերլուկուտիվ արդյունք, դրական գնահատական, հաղորդակցական նպատակ, մտադրություն, հասցեատեր*

Եթե լեզվի շարահյուսությունը բացատրում է, թե ինչպես է կառուցված ասույթը, և ինչպես է խոսում մարդը, իմաստաբանությունը ցույց է տալիս, թե ինչ է նա ասում, կամ ինչ է նշանակում տվյալ ասույթը, ապա գործաբանությունը ձգտում է բացահայտել, թե տվյալ դեպքում ինչ պայմաններում և ինչ նպատակով է մարդը խոսում: Ինչպես հայտնի է, գործաբանության հիմքում ընկած է խոսքային գործունեության ընթացքում խոսքային ակտերի և դրանց

* **Նարինե Գասպարյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոն, ասիստենտ

Нарине Гаспарян – кандидат филологических наук, доцент кафедры английской филологии ЕГУ, ассистент
Narine Gasparyan – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of English Philology, Assistant

Էլ. փոստ՝ narinegasparyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0006-4716-4362>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 14.03.2024

Գրախոսվել է՝ 04.11.2024

Հաստատվել է՝ 06.11.2024

© The Author(s) 2024

իրականացման հանգամանքների հետազոտությունը: Խոսքային ակտն ընկալվում է որպես գործաբանական ոլորտի միավոր՝ խոսքի նվազագույն հատված, որն արտահայտում է խոսողի մտադրությունը որոշակի համատեքստում և լեզվական ձևակերպմամբ:

Խրախուսական դիսկուրսում առանձնահատուկ տեղ է գրավում գովաբանությունը: Գովաբանությունը հուզական արտահայտչամիջոց է, որի ընթացքում խոսողը արտահայտում է իր հուզական վերաբերմունքը փաստի նկատմամբ:

Գովաբանությունն արտահայտող ակտերի մեջ իր առանձնահատուկ տեղն ունի գովեստը, որով էլ բացատրվում է այդ ակտի մանրամասն վերլուծությունը հողվածում: Հետազոտության հիմքում ընկած է նկարագրական մեթոդը:

Գովեստը ներակա-պերֆորմատիվ ասույթներ պարունակող, արտահայտչական խոսքային ակտ է, որը ենթադրում է այդ ակտի նպատակաուղղվածության դրսևորում: Նշված ակտի իլլոկուտիվ նպատակն է փորձել գովելու միջոցով խրախուսել դիմացինին և մղել կատարելու որոշակի գործողություն, որը ներկայացվում է նախադրությային բովանդակությամբ: Նախնական պայմանն այն է, որ լսողն ի վիճակի է իրականացնելու այդ ծրագիրը, իսկ անկեղծության պայմանը ենթադրում է, որ խոսողը ցանկանում է, որ լսողն իրականացնի տվյալ գործողությունը: Գովեստը անկեղծ դրական գնահատում է, որը սովորաբար ընկալվում է որպես գրուցակցի արարքին տրված դրական գնահատական: Այն արտահայտում է խոսողի անկեղծ վերաբերմունքը խոսակցի նկատմամբ, դրական գնահատողական արձագանքը նրա արարքին:

Համաձայն Ա. Վեժբիցկայայի՝ գովեստի իլլոկուտիվ մտադրությունը խոսողի կողմից իր մտածածն արտահայտելն է¹:

Առավել հաճախ որպես քաջալերման արտահայտման՝ մասնավորապես գովեստի օբյեկտ հանդես են գալիս երեխաները:

1. *"I appreciate what you did, you are really showing improvement."*
2. *"You really thought out the solution to that problem."*
3. *"I am so blessed to have you in my life."*
4. *"It's obvious that you did your best."*

Նմանատիպ ասույթները անձին, հատկապես երեխաներին, պարտավորեցնում են ավելի կատարելագործվել, ոգևորում են նրանց՝ հասնելու նոր նվաճումների:

Կիրառվում է նաև գովեստի գրավոր ձևը՝ պարզևատրումների, շնորհակալագրերի տեսքով, երբ խրախուսվում են անձի ձեռք բերած հաջողությունները, ջանասիրությունը, նախաձեռնությունը և այլն: Այն անհատին պարտավորեց-

¹ Տե՛ս **Wierzbicka A.** English Speech Act Verbs: A Semantic Dictionary. Sydney: Academic Press, 1987, էջ 199:

նում է լինել ավելի կատարյալ, բարձրացնում է պատասխանատվության զգացումը, ոգևորում է նրան՝ հասնելու նոր նվաճումների: Գովեստը հավատ է ներշնչում անձի սեփական ուժերի և ընդունակությունների հանդեպ, առաջացնում է նոր եռանդ և ձգտումներ:

Ընդունված է, որ գովեստի խոսքային ակտի իրականացման հաջողությունը հիմնականում կախված է հասցեագրողի առավել բարձր կարգավիճակից, որն օբյեկտիվորեն որոշում և արդարացնում է գովելու նրա իրավունքը:

«Սոցիալական կարգավիճակ» ասելով մենք հասկանում ենք «մարդու համահարաբերական դիրքը սոցիալական համակարգում, որը ներառում է վարքագծի իրավունքներն ու պարտականությունները և դրանցից բխող փոխադարձ սպասումները»²: «Սոցիալական կարգավիճակ» հասկացությունն անխզելիորեն կապված է «սոցիալական դեր» հասկացության հետ: Սոցիալական կարգավիճակը, բնութագրելով մարդու տեղը հասարակական ստորակարգությունում, պատասխանում է «ո՞վ է անհատը» հարցին, իսկ սոցիալական դերը, արտացոլելով հասարակության կողմից ընդունված վարքագծի ձևը՝ «ի՞նչ է անում նա» հարցին: Խոսքային վարքագիծը միշտ ենթարկվում է դերակարգավիճակային փոխազդեցության օրենքներին³:

Դեպքերի մեծամասնությունում գովեստի պերլոկուտիվ ազդեցությունը գովեստի օբյեկտի գերազանցության, առաջնայնության հաստատումն է և, որպես հետևանք, նրա հուզական վիճակի բարելավումը⁴: Գովեստի պերլոկուտիվ ուժը ունի հետևյալ հավանական ելակետային մտադրությունները.

ա) գովեստի օբյեկտի խրախուսում՝ հավանության, հիացմունքի արտահայտում և այլն (անկեղծորեն),

բ) գովեստի օբյեկտի հատկանիշների և արարքների ուղղակի ճանաչում՝ որպես դրական,

գ) գովեստի օբյեկտի պաշտպանություն:

Հաղորդակցման գործընթացում բոլոր ասույթները իրականանում են որոշակի համատեքստում և, բացի տեղեկատվական բնույթից, համապատասխանաբար ունեն նաև սոցիալ-համատեքստային իմաստ: Այսպիսով՝ տրամաբանական խոսքի նկարագրության համար բավական չէ միայն լեզվաբանական նկարագրությունը, այն պետք է ենթարկվի առավել ընդարձակ հոգեբանական կամ է՛լ ավելի ընդարձակ՝ սոցիալ-հոգեբանական վերլուծության: Այս դեպքում հաղորդակցական իրադրությունները, որոնցում գովեստի իրականացումը միանգամայն պատշաճ և հաջող է, լինում են երկու տեսակի⁵.

² Карасик В. И. Язык социального статуса. М.: Институт языкознания РАН, 1992, с. 3.

³ Տե՛ս Գորելով Ի. Ն., Տե՛ս Սե՛դով Կ. Փ. Основы психоллингвистики. М.: Лабиринт, 2001, էջ 121:

⁴ Տե՛ս Սե՛տելինա Ե. Ս. Прагматические особенности высказываний положительной оценки. Автореферат дис. канд. филол. наук. Пятигорск, 1986, էջ 7:

⁵ Տե՛ս Սե՛տելինա Ե. Ս. Прагматические особенности высказываний положительной оценки. Автореферат дис. канд. филол. наук. Пятигорск, 1986, էջ 10:

1. Իրադրություններ, որոնցում սուբյեկտի կողմից գովեստի իրականացումը պայմանավորված է արդարացված է նրա՝ իսկապես բարձր կարգավիճակով գովեստի օբյեկտի համեմատ: Նմանատիպ գովեստը կիրառվում է հատկապես ղեկավար-ենթակա, ուսուցիչ-աշակերտ, ծնող-երեխա հարաբերություններում (այն համարվում է մանկավարժական ներգործության միջոց, որը նպատակ ունի երեխաներին մղելու ուսման և վարքի բարելավման):

2. Իրադրություններ, որոնցում հավասար կամ առավել ցածր սոցիալական կարգավիճակ ունեցող խոսողն իրեն բարոյական իրավունք է վերապահում տալ դրական գնահատական իր խոսքնկերոջը՝ դրական գնահատել նրա գործողությունները, բնավորության գծերը, արտաքին տվյալները՝ հիմնվելով կոնկրետ հաղորդակցական իրադրությունում նրան առաջարկված կամ անձամբ նրա կողմից ստանձնած որոշակի դերով: Նման իրադրությունները արտացոլում են ամուսնու և կնոջ, եղբոր և քրոջ, ընկերների և այլոց շփումը: 2-րդ իրադրությունը բնորոշ է նաև ինքնագովեստին (հազվադեպ դեպքերում, սակայն, հնարավոր է ինքնագովեստ նաև 1-ին իրադրության պայմաններում): Դա բացատրվում է նրանով, որ խոսողը մտադիր է առանձնանալ իր հասակակիցներից կամ միևնույն կարգավիճակն/դերն ունեցող իր հաղորդակիցներից՝ չանտեսելով համեստության կարգախոսը, ինչը պարտադիր տեղի կունենար ղեկավարի ներկայությամբ ինքնագովեստի դեպքում:

Նշենք, որ 1-ին և 2-րդ իրադրային պայմաններում հաղորդակիցների դերակարգավիճակային բնութագրերի տարբերակումը դրսևորվում է այս կամ այն իրադրությունում իրականացվող գովեստի արտահայտման միջոցների տարբերությամբ:

Փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ 1-ին իրադրությանը բնորոշ են հետևյալ արտահայտությունները՝ *to be of noble character, be a brave boy, to have brains* և այլն, իսկ 2-րդ իրադրությանը՝ *to have a lot of charm, to be the best* և այլն:

Այսպիսով՝ հաղորդակցման գործընթացում գովեստի խոսքային ակտը բնականաբար պայմանավորված է որոշակի համատեքստով: Նման համատեքստը, ըստ այդ ակտի իլլոկուտիվ իմաստի և պերլոկուտիվ ազդեցության, գովեստի համար որպես չափանիշային ներկայացվում է երկու ձևով՝ խոսողի կողմից գովեստի օբյեկտի գերազանցության, առաջնայնության հաստատման իրադրություն (գովեստի համար), և խոսողի ինքնահաստատման՝ հաղորդակցի կողմից իր հասցեին գովեստի ակնկալման իրադրություն (ինքնագովեստի համար):

Ի տարբերություն ինքնահաստատման իրադրության, որտեղ դրական գնահատականի ենթադրյալ օբյեկտը ինքնուրույն, բացարձակ գիտակցված կերպով խթանում է իր իսկ հասցեին գովեստի ստացումը (իրադրություն 2-րդ), խոսողի կողմից գովաբանության օբյեկտի գերազանցության և առաջնայնության հաստատման իրադրության շրջանակներում որպես նախաձեռնող

հանդես է գալիս գովաբանության սուբյեկտը կամ խոսողը (իրադրություն 1-ին): Գովաբանության օբյեկտը նման իրադրությունում բնութագրվում է որպես հետաքրքրված անձ, բայց ոչ նախաձեռնող:

Զրուցակիցների դերերի նման բաշխումը, ի տարբերություն ինքնագովեստի իրադրության, բնականաբար ենթադրում է գովեստի օբյեկտի պատասխան արձագանքների լայն ընդգրկում: Քննարկենք դրանք առավել մանրամասն:

ա. Դրական արձագանքներ կամ գովեստի ընդունման արձագանքներ. այստեղ մենք առաջարկում ենք ներառել խոսքային և/կամ ոչ խոսքային այն գործողությունները, որոնց հիմնական նպատակն է փոխանցել գովեստի օբյեկտի ուրախությունը, երախտագիտությունը, հպարտությունը, ինքնագովերգումը, լուռ համաձայնությունը գնահատականի հետ՝ որպես իր հասցեին խրախուսման, հավանության ամբողջովին ընդունման հետևանք: Օրինակ՝

1. *“I love your show, Mr. Python”, smiled the elevator operator.*
2. *“Thank you.” He smiled back.⁶*
“You look mighty sweet tonight.”
Thank you, Anthony.”⁷
3. *If I had a wife like you, I’d stay at home. Couldn’t make me leave.”*
Abby smiled at the compliment. “How is Mrs. Rice?”⁸

բ. Կեղծ բացասական արձագանքներ. այս խմբի մեջ մեր կողմից ներառվել են գովեստի օբյեկտի այն խոսքային և/կամ ոչ խոսքային գործողությունները, որոնք փոխանցում են գովեստը իր հասցեին ընդունելու կեղծ վրդովմունքը, կասկածը, մերժումը, անհամաձայնությունը, կոկետությունը / պչրականությունը և այլն: Օրինակ՝

- Shannon: I’m going to tell you something about yourself.*
You are a lady, a real one and a great one.
Hannah: What have I done to merit that compliment from you?
Shanon: It isn’t a compliment, it’s just a report on what I’ve noticed about you.⁹

Այս երկխոսական համատեքստը պատկերում է գովեստի ակտի իրականացում, որտեղ օբյեկտի անվստահությունը խոսողի անկեղծության և գովեստի համապատասխանության հարցում արտահայտվում է հետևյալում՝ «*What have I done...?*», որը խոսողը փորձում է վերացնել «*It’s not a compliment*» վստահեցնող պատասխանի միջոցով: Հաճախ, երբ խոսողը գովեստի դիմաց բացասական պատասխան է ստանում, նա փորձում է վստահեցնել խոսակցին իր

⁶ Collins J. Hollywood Husbands. US: Pocket Books, 1986, 536 p.

⁷ Fitzgerald F. S. Selected Short Stories. Moscow: Progress Publishers, 1979, 360 p.

⁸ Grisham J. The Firm. N.Y.: Island Books, 1991, 502 p.

⁹ Williams T. The Night of the Iguana // Three by Tennessee. N.Y.: Times Mirror, 1976, p. 9-127.

անկեղծության մեջ, ինչը խոսքում սովորաբար արտահայտվում է հետևյալ ասույթի միջոցով. «*It isn't a compliment, I mean it*» կամ էլ գովեստի կրկնության և/կամ սաստկացման միջոցով: Նման պատասխանների կիրառումը հաստատում է այն փաստը, որ նպատակային առումով հաճոյախոսությունը ավելի մոտ է շողոքորթությանը, քան անկեղծ գովաբանությանը:

գ. Բացասական արձագանքներ կամ գովեստի չընդունման արձագանքներ. այս խմբի մեջ մենք առաջարկում ենք ներառել խոսքային և/կամ ոչ խոսքային այն գործողությունները, որոնց հիմնական նպատակն է փոխանցել գովեստի օբյեկտի շփոթմունքը, զարմանքը, մերժումը, անհամաձայնությունը նրա հետ, գովեստի օբյեկտի որակների դրական լինելու վերաբերյալ հակադիր կարծիքի պնդումը, դրական գնահատականի հանդեպ պատասխանի բացակայությունը:

“That’s nice of you to say so”, she said, warming to him.

“No, not nice”.¹⁰

Այս երկխոսական համատեքստում գովեստի հասցեատերը պարզապես չի ընդունում գովեստը և դրան բացասական արձագանք է տալիս՝ *No, not nice*:

Dion: From the time I realized it wasn't in me to be an artist, except in living – and not even in that!

Margaret: But you can paint, Dion – beautifully!

Dion: Shut up!¹¹

Վերևում ներկայացված երկխոսական համատեքստը իրենից ներկայացնում է անկեղծ գովեստի իրականացման պատկերում զայրույթի շարժառիթով. գովեստը զայրույթ է առաջացնում (Դայոնի խոսքը): Դրական գնահատականի արտահայտումը (Մարգարետի պատասխանը) խորացնում է Դայոնի զայրույթը, ինչը արտահայտվում է գովեստի չընդունման՝ նրա բացասական արձագանքով՝ *Shut up!*: Անհրաժեշտ է նշել, որ խոսողի կողմից բացասական պատասխան ստանալը արված գովեստի հանդեպ արտահայտում է խոսակցի անվստահությունը գովեստի համապատասխանության և անկեղծության հանդեպ:

Արտահայտած գնահատականի համապատասխանությունը հաստատելու նման մտադրություն մենք նկատում ենք այն դեպքերում, երբ գովեստի օբյեկտը վստահ չէ սուբյեկտի անկեղծության հարցում կամ խոսողի կողմից գովաբանվող իր անձնական հատկանիշների, արարքների գերազանցության հարցում: Այստեղ նաև տեղ ունի քաղաքավարության սկզբունքը՝ համեստության կարգախոսը:

Գովեստի ակտի իրականացման հիմնական շարժառիթներ ենք համարում գովեստի ենթադրյալ օբյեկտի կողմից հրամանների, ցուցումների, խնդրանքների

¹⁰ Lawrence D. H. The Plumed Serpent. Harmondsworth: Penguin Books, 1977, 462 p.

¹¹ O’Neill E. The Great God Brown // Nine Plays by E. O’Neill. New York: Random House, 1954, p. 307-381.

և այլնի կատարումը, օբյեկտի ունակությունները, կարողությունները, նրա դրական արարքները և/կամ որակները, որոնք դրսևորվել կամ էլ հիշատակվել են իրադրության շրջանակներում, գովեստի ենթադրյալ օբյեկտի սրամիտ, հաջող խոսքային և/կամ ոչ խոսքային գործողությունները, կամ էլ նրա անելանելիությունը՝ դժգոհությունը, զայրույթը, ընդհանուր բացասական հուզական վիճակը:

Ուսումնասիրենք գովեստի իրականացման որոշ օրինակներ:

Caesar: The Queen must face Caesar alone. Answer "So be it."

Cleopatra: So be it.

Caesar: Good.¹²

Տվյալ երկխոսական համատեքստը պատկերում է գովեստի խոսողական ակտի իրականացումը օբյեկտի գերազանցության և առաջնայնության հաստատման իրադրության շրջանակներում (1-ին իրադրություն): Կեսարի նախաձեռնողական խոսքը հրաման է, ցուցում, որը տրվել է Կլեոպատրային տիրակալի իրավունքով: Կլեոպատրայի կողմից Կեսարի հրամանի կատարումը գնահատվում է վերջինի կողմից գովեստի խոսքով:

Ստորև բերվող երկխոսության մեջ դրական գնահատականը ուղղված է գովեստի բացակայող օբյեկտին: Ընդունելով օբյեկտի գործնական որակներն իբրև արժանի դրական գնահատականի՝ հասցեագրողը ձգտում է հաստատել նրա բարձր հեղինակությունը, հիասքանչությունը, առաջնայնությունը:

1. *"Well how do you find Honoria?" she asked.*

"Wonderful. I was astonished how much she's grown up in ten months."¹³

2. *Tom was a good listener. He was clever at his business. One day Michael said to her:*

"Smart fellow, Tom. He knows a lot about income tax ..."¹⁴

2-րդ օրինակում հասցեագրողի հիմնական մտադրությունը գովեստի բացակայող օբյեկտի մասնագիտական վարպետության և աշխատասիրության վերաբերյալ դրական կարծիքի արտահայտումն է: Հասցեագրողի նախնական պատասխանը կրում է ֆատիկ խոսքարկային բնույթ: Հասցեատիրոջ կողմից խոսակցության թեման շարունակելու փաստը հաստատում է նրա հուզականության փոխանցումը՝ **հուզական վարակը** (գիտաբար՝ Պիտորովսկայայի, տե՛ս Писаровская, 1994) իբրև տվյալ ԽՄ-ի պերլոկուտիվ արդյունք: Ինչ վերաբերում է հասցեատիրոջ հուզմունքի փոխանցմանը՝ հուզական վարակին, ապա նման պերլոկուտիվ արդյունքը հնարավոր է բացակայող անձին գովելու իրադրությունում, երբ երկու հաղորդակիցներ գնահատական են տալիս երրորդ անձին՝ «արտահայտելով հիացմունք այն

¹² **Shaw B.** Caesar and Cleopatra // **Shaw B.** Selected Works. Plays. Selections from Criticism. M.; Foreign languages Publishing House, 1958, p. 229-552.

¹³ **Fitzgerald F. S.** Babylon Revisited / Selected Short Stories. Moscow: Progress Publishers, 1979, 360 p.

¹⁴ **Maugham W. S.** Theatre. Moscow: Vyssaya Skola, 1985, 224 p.

անձի գործողությունների մասին, ով չի մասնակցում հաղորդակցման գործընթացին. խոսողը ձգտում է առաջացնել համանման զգացում զրուցակցի մոտ»¹⁵: Լիովին համամիտ լինելով տվյալ դրույթին՝ ավելացնենք, որ այն իրականանալի է միայն հասցեագրողի և հասցեատիրոջ կարծիքների համընկնման դեպքում: Երրորդ անձին գովելու իրադրությունում, կարծում ենք, կարելի է խոսել հասցեատիրոջ հավանական հուզական վարակի մասին: Հասցեագրողի մոտ շահադիտական նպատակների բացակայությունը, հասցեատեր-օբյեկտի հետ անձնական հարաբերությունները բարելավելու ձգտումը, երրորդ անձ-օբյեկտի հեղինակության հաստատումը նրա համար չպետք է ստեղծեն դժվարություններ զրուցակցի մտադրությունները ապակողավորելու գործընթացում:

Անցկացնենք տվյալ երկխոսության հասցեագրողի պատասխանի կազմի մեջ մտնող նախադասության կանխենթադրույթների վերլուծություն: Հաղորդակիցների իմաստային կանխենթադրույթի իսկությունն (աշխատասեր օբյեկտ) ու գործաբանական կանխենթադրույթի (հասցեատերը գիտի, ինչ և ինչպես է անում գնահատվող օբյեկտը) ընդհանրությունը թույլ են տալիս ասույթը բնութագրել որպես գովեստ: Տվյալ ասույթների իմաստաբանական նախադրույթը համընկնում է հաղորդակիցների գործաբանական կանխենթադրույթի հետ: Հասցեագրողը ձգտում է ոչ թե արտահայտել իր հուզական վիճակը, այլ հաստատել գովեստի բացակայող օբյեկտի հեղինակությունը հասցեատերերի աչքերում և նրանց փոխանցել որոշակի հուզականություն:

Հասցեատիրոջ իրական որակների դրական գնահատականում հասցեագրողի կողմից կիրառվում են շփման երկու կարգախոսները. խրախուսման, հավանության կարգախոսը (approbation maxim: հասցրո՛ւ նվազագույնի ուրիշի բացասական գնահատականը, առավելապես գովաբանի՛ր ուրիշին) և տակտի կարգախոսը (tact maxim: հասցրո՛ւ նվազագույնի ուրիշի անհարմարությունները, ցուցաբերի՛ր առավելագույն հարմարություն ուրիշին)¹⁶:

Հաջորդ երկխոսության մեջ հասցեագրողը (տղամարդ), խոսելով հասցեատիրոջ հետ (իր կինը), արտահայտում է իր հիացմունքը, որը պայմանավորված է բացակայող երրորդ անձի՝ երիտասարդ աղքատ կնոջ գեղեցկությամբ և հմայքով:

“But,” said Philip slowly, and he cut the end of a cigar, “she’s so astonishingly pretty.”

“Pretty?” Rosemary was surprised that she blushed. “Do you think so? I – I hadn’t thought about it.”

“Good lord!” Philip struck a match. “She’s absolutely pretty.”¹⁷

¹⁵ Пнотровская Л. А. Эмотивные высказывания как объект лингвистического исследования: Монография. СПб.: Изд-во С.-Петербур. ун-та, 1994, с. 51-52.

¹⁶ Leech G. N. Principles of Pragmatics. London: Longman, 1983, p.132.

¹⁷ Mansfield K. A. Cup of Tea //Selected Stories. М.: Foreign Languages Publishing House, 1959, 183 p.

Գովաբանելով անծանոթուհու գեղեցկությունը, որը դարձել է դրական գնահատականի շարժառիթ՝ հասցեագրողը հասցեատիրոջ մոտ բացահայտ կերպով արտահայտում է իր հույզերը, ինչը դրսևորվում է հուզական բառերով *astonishingly pretty, absolutely pretty, pretty* բառի կրկնությամբ:

“It’s a great show, Jake... It’s really an art that Carrie has,” Stephen said proudly.¹⁸

Այս օրինակում ևս գովեստի հասցեատերը՝ Քեյրիին, ներկա չէ գրույցին:

Ինչպես հետևում է վերջին երկու համատեքստերից, հուզական արտահայտությունները ոչ միշտ են հանգեցնում հաղորդակիցների հուզական վիճակի փոխանցման: Հնարավոր պերլոկուտիվ արդյունքի բացակայության պատճառներից մեկը կարող է համարվել հաղորդակիցների կողմից համակրանքի կարգախոսի ակնհայտ խախտումը (*sympathy maxim*)¹⁹, որը կարող է արտահայտվել անհամաձայնությամբ:

Նշենք, որ անգլիական լեզվամշակույթում նման իրադրությունը այնքան էլ բնութագրական չէ գովեստի համատեքստին:

Ստորև ներկայացված երկխոսական համատեքստը դարձյալ խոսողի կողմից գովեստի արտահայտում է գովեստի օբյեկտի գերազանցության հաստատման իրադրության շրջանակներում: Որպես դրա իրականացման շարժառիթ՝ գովեստի օբյեկտի մոտ իսկապես դրական հատկանիշների առկայությունն է (տվյալ դեպքում օբյեկտի նպատակասլացությունը, հմտությունը), որոնք արժանի են բարձր գնահատականի:

“You’d better get his fingerprints, Sugen, and see if he’s known.”

“I’ve already got them.”

“Good man.”²⁰

Այս համատեքստում գովեստի սուբյեկտի պատասխան-արձագանքը (*Good man*) անկեղծ է և դրական:

Հետևյալ երկխոսական համատեքստը ևս պատկերում է սուբյեկտի կողմից գովեստի իրականացումը գովեստի օբյեկտի գերազանցության հաստատման իրադրության շրջանակներում:

“This essay is wonderful, Carrie. You are very talented, gifted ... Do you plan a career as a writer?”

“I haven’t thought about it...”²¹

Գովեստի հասցեագրողը ուսուցիչն է, հասցեատերը՝ ուսանողը: Գովեստը անկեղծ է, այն գովաբանություն է՝ ուղղված ուսանողին: Գովեստի իրականաց-

¹⁸ Stone K., *Roommates*. N.Y.: Zebra Books, 1987, 569 p.

¹⁹ Տե՛ս Leech G. N., նշվ. աշխ., էջ 132:

²⁰ Christie A. *Hercule Poirot’s Christmas*. L.: Harper Collins Publishers, 1993, 210 p.

²¹ Stone K., նշվ. աշխ., էջ 569:

ման շարժառիթ է օրյեկտի մոտ դրական հասկանիչների ակնհայտ առկայությունը:

“Wherever you live, you make the most beautiful garden I ever saw.”²²

Այս օրինակում գրույցը տեղի է ունենում մոր և աղջկա միջև: Աղջիկը, այցելելով մորը և տեսնելով գեղեցիկ պարտեզը, գովաբանում է նրա հմտությունը, աշխատասիրությունը, ճաշակը: Այս պարագայում ևս գովեստը անկեղծ է:

“A mother only does her children harm if she makes them the only concern of her life”.

“I think you’re quite right”. “I think you’ve behaved in a very sensible manner.”²³

“I got on perfectly. Went to Sanborn’s for tea, and had strawberry shortcake.”

“Oh! Good for you!”²⁴

Վերևում ներկայացված երկխոսական համատեքստերը պատկերում են գովեստի իրականացումը որպես պատասխան-արձագանք այն շարժառիթի, որն իրենից ներկայացնում է գովեստի օրյեկտի խելամիտ գործողություններ:

Գովեստի իլլոկուտիվ մտադրությունը անզիական լեզվամշակույթում կարող է դրսևորվել նույնիսկ բացարձակ անձանոթ մարդկանց դրական գնահատականով: Հաջորդ օրինակը դրա ապացույցն է.

“What a young man! How many of you Americans are like that?...”²⁵

Դատելով համատեքստից՝ գովեստը ուղղված է անձանոթ մարդկանց, և տվյալ դեպքում ասույթը չի կարող ունենալ գործաբանական կանխենթադրույթ: Ինչպես հայտնի է, իմաստաբանական կանխենթադրույթը ոչ միշտ է փոխարինվում գործաբանականով²⁶:

Հասցեագրողի հուզական վիճակը հստակ դրսևորվում է *“What a young man!”* բացականչական կառույցով:

Գովեստի իրականացման ժամանակ խոսողն ունի միայն մեկ դեր՝ լինել գովեստի սուբյեկտ: Նրա օրյեկտն է այն անձը, ում ինքը գովում է: Իսկ ինքնագովեստի իրականացման ժամանակ խոսողը միաժամանակ դրական գնահատականի և՛ սուբյեկտն է, և՛ օրյեկտը:

Խոսողի կողմից գովեստի օրյեկտի գերազանցության, հեղինակության և առաջնայնության հաստատման իրադրության պայմաններում մեր կողմից վերևում նկարագրված և պատկերված դերային փոխհարաբերությունները ունեն որոշակի տարբերակիչ զծեր, որոնք ներկայացվում են գովեստի սխեմայում: Այդ սխեման, մեր կարծիքով, կարելի է ներկայացնել հետևյալ եղանակով. Խ1-

²² Michael J. Private Affairs. N.Y.: Poseidon Press, 1986, 554 p.

²³ Maugham W. S. The Razor’s Edge. N. Y.: Vintage International, 2003, 314 p.

²⁴ Lawrence D. H., նշվ. աշխ.:

²⁵ Wilder T. The Cabala // Wilder T. Selected Works. Moscow: Raduga Publishers, 1988, p. 25-286.

²⁶ Ст’ u Падучева Е. В. Высказывание и его отношение к действительности. М. Наука, 1985, էջ 58:

ը առաջին հաղորդակիցն է (գովեստի ենթադրյալ օբյեկտը), Խ2-ը երկրորդ հաղորդակիցն է (գովեստի ենթադրյալ սուբյեկտը), Դ՝ իրերի իրական դրությունը:

Խ2-ը մտադիր է վստահեցնել, որ Խ1-ի գեղագիտական և/կամ բարոյական հատկանիշները, արարքները գնահատվել են ըստ արժանվույն՝ բարձր: Այդ դեպքում Խ2-ը պետք է ցույց տա Խ1-ին, որ ինքը գործում է բացառապես անկեղծ, անշահախնդիր, Խ1-ի հետաքրքրությունների շրջանակներում: Քանի որ Խ1-ը նույնպես վստահ է, որ Դ՝ նա արժանի է գովեստի, և Խ2-ը համարում է, որ Խ1-ը իսկապես արժանի է բարձր գնահատականի, ուստի, համապատասխանաբար, Խ1-ի և Խ2-ի կարծիքները Դ՝ իրերի դրության և իրականության վերաբերյալ համընկնում են, ինչպես ակնհայտորեն համընկնում են նրանց տեսակետները կոնկրետ տվյալ իրադրությունում գովեստի՝ օբյեկտիվորեն տեղին լինելու վերաբերյալ:

Խ1-ի հասցեին Խ2-ի կողմից գովեստի խոստովական ակտի իրականացման դեպքում Խ2-ի գործողությունները միանշանակ համահարաբերվում են նրա իրական մտադրությունների հետ:

Իրականացվող ակտի կանխենթադրույթի հիմքում ընկած է Խ1-ի և Խ2-ի վստահությունը գովեստի տեղին լինելու հարցում և այն, որ Խ2-ը իրեն իրավունք է վերապահում տալ գնահատական Խ1-ի հասցեին՝ ըստ իր կարգավիճակի կամ դերի:

Խ2-ի կողմից իր ասույթների հիմքում ընկած տեղեկատվության վերծանման դեպքում Խ1-ի պատասխան-արձագանքը ստացված գովեստի հանդեպ պայմանավորված է Խ2-ի գործողություններով, որոնք, Խ2-ի կարծիքով, համապատասխանում են կամ չեն համապատասխանում իր (Խ2-ի) մտադրություններին, ինչպես նաև իր հասցեին գովեստ ստանալու՝ Խ1-ի հետաքրքրվածությամբ: Խ2-ը իրեն իրավունք է վերապահում տալ Խ1-ին ուղղված գնահատական՝ ըստ իր կարգավիճակի կամ դերի: Քանի որ Խ2-ի կողմից Խ1-ին ուղղված գովեստի իրականացման դեպքում Խ2-ի գործողությունները միանշանակ համահարաբերվում են նրա անկեղծ, իրականում գոյություն ունեցող մտադրությունների հետ, ուստի վերջինները ամբողջությամբ համընկնում են Խ1-ի բարձր, իրեն արժանի (իր կարծիքով), իր որակները, արարքները հաստատող գնահատական ստանալու մտադրության հետ:

Ուսումնասիրության արդյունքները կրկին ցույց են տալիս, որ այս կամ այն կառույցի կիրառումը խոսքում պայմանավորված է հաղորդակցական իրադրության նպատակով: Ելնելով գովաբանական ակտերի առանձնահատկություններից՝ երկխոսական համատեքստերում ընդգծվեցին հիմնական շարժառիթները և մտադրությունները, որոնց նպատակն է գովաբանության նախաձեռնումը, գովաբանության օբյեկտի քաջալերումը, ինչպես նաև նշվեցին արձագանքների հիմնական տեսակները, որոնք գովաբանության իրականացման հետևանք են շփման գործընթացում:

НАРИНЕ ГАСПАРЯН – Семантико-прагматическая характеристика дискурса похвалы. – Одним из средств выражения поощрения является похвала. Речевой акт похвалы занимает определенное место в системе экспрессивных оценочных актов, направленных на собеседника. Похвала – это искренняя положительная оценка адресата или третьего лица независимо от того, присутствует она или нет в ходе общения. Восхваляя адресата или третьего лица за его действия, адресаты высоко эксплицитно выражают собственное эмоциональное состояние или эмоциональное отношение к фактам речи.

Похвала считается положительным оценочным речевым актом и частью стратегии коммуникативных переговоров. Когда мы хвалим человека, мы можем мотивировать его на достижение своей цели или мечты.

Похвала – иллокутивный акт, предполагающий проявление целенаправленности речевого акта и выражающий искреннее отношение говорящего к собеседнику. Реализация данного акта обусловлена разными статусными и ролевыми характеристиками коммуникаторов.

Настоящая статья является попыткой выделить семантические и прагматические характеристики речевых актов, выражающих похвалу.

Ключевые слова: *речевой акт, похвала, самовосхваление, положительная оценка, перлокутивный результат, коммуникативная цель, намерение, адресат*

NARINE GASPARYAN – The Semantic-Pragmatic Characteristics of the Discourse of Praise. – One of the means of expressing encouragement is praise. Praise is a sincere positive evaluation of the addressee or a third person, whether he is present or not in the course of the communication. While praising the addressee or a third person for their actions, praise addressers highly explicit their own emotive state or the emotive attitude towards the facts of speech.

Praise is considered a positive evaluative speech act and part of a communication negotiation strategy. When we praise a person, we can motivate them to achieve their goal or dream.

Praise is an illocutionary act, which implies the manifestation of the purposefulness of the speech act and expresses the sincere attitude of the speaker towards the interlocutor. The implementation of this act is conditioned by the different status and role characteristics of the communicators.

The purpose of the article is to present the semantic and pragmatic peculiarities of speech acts expressing praise.

Key words: *speech act, praise, self-praise, positive assessment, perlocutive result, communicative purpose, intention, addressee*